# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՏԱՆՈ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 74 - 75 (16372) ՇԱԲԱԹ, 10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ


ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

### «ԱՄԱԳԴԱՐԻ» ԿՐԾՔԱՆՇԱՆ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ԹԻՎ 104 ԴՊՐՈՑԻ ՈՒՍՄԱՍՎԱՐ ԱԼՄԱՐԻ ՍԻՐԱԴԵՂՅԱՆԻՆ




*Հոկտեմբերի 5-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, ուսուցիչների օրվա կապակցությամբ, Թբիլիսիի սակրեբուլոյում կազմակերպված ընդունելությանը մանկավարժներին շնորհավորեց մասնագիտական տոնի առթիվ:*

Իր շնորհավորական խոսքում նա առանձնակի ընդգծեց մատաղ սերնդի դաստիարակության գործում ուսուցչի դերը. «Աշակերտները իրենց հիմնական ժամանակը անց են կացնում դպրոցում, մնացածը՝ տանը, ուստի առանձնակի կցանկանայի ընդգծել մատաղ սերնդի դաստիարակության գործում ուսուցիչների վիթխարի դերը: Ցանկանում եմ ընդգծել նաեւ, որ պետության հեղինակությունը ձեւավորվում է մի քանի չափորոշիչներով, նրանով, թե պետությունն ինչպես է հոգ տանում կրթության ոլորտի մասին: Չափորոշիչներից մեկն այն է, թե ինչպես է պետությունը հոգում մանկավարժների մասին: Մեր կառավարությունը անմիջապես հայտարարեց, որ մեր առաջնահերթություններից մեկը մանկավարժների կենսամակարդակի բարելավումն է, նրանց համար շարժառիթի ուժեղացումը, աշխատավարձի բարձրացումը»,- հայտարարեց վարչապետը:

Վրաստանի կառավարության ղեկավարը կրթու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՎՈՒՄ ԵՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԵՎ ՀԱՆՈՒՆ ԵՐԿՐԻ ԱՊԱԳԱՅԻ»

*Հոկտեմբերի 6-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, պատասխանելով «Ռուսթավի 2» հեռուստաընկերության հարցերին, հայտարարեց, որ ընտրությունների անցկացման հարցը որոշելու է սահմանադրական հանձնաժողովը:*




Հիշեցնենք, որ խորհրդարանին ներկայացվել է «Վրացական երազանք» կոալիցիան ներկայացնող 81 պատգամավորի կողմից ստորագրված օրինանախագիծը, որը նախատեսում է 2016 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո մեծամասնական ընտրահամակարգի վերացում եւ ընտրական ագելագիծը 5-ից մինչեւ 4 տոկոսի իջեցում: Ընդդիմությունն իր հերթին պահանջում է 2016 թվականի ընտրությունների համար մեծամասնական ընտրահամակարգի վերացում եւ ընտրությունների՝ համա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԱՏԱԿԱՆ

## ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՎՐԱՑԱԿԱՆ ԿՈՂՄԸ ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾ Է ԷԹՆԻԿԱԿԱՆ ԶՏՄԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ»

*Հաագայի միջազգային դատարանը չի բացառել հանգամանքը, որ մոտ ապագայում կսկսի ուսումնասիրել 2008թ. օգոստոսին Վրաստանում, մասնավորապես Սամաչաբլոյում (Ցխինվալիի տարածաշրջանում) տեղի ունեցած ռազմական գործողությունները:*

Դատարանի դատավոր Ֆատու Բենսուդան ուսումնասիրել է հակամարտության վերաբերյալ դատարանին տրամադրած փաստաթղթերը եւ կողմերի գործողություններում նկատել է հանցագործություններ, որոնք հենց Հաագայի դատարանի իրավասության ներքո են:

Բենսուդը մտադիր է պաշտոնական նամակով դիմել դատարանին՝ 2008թ. դեպքերը հետաքննելու

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱԼՅԱՆՍԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ԷԻՆ



*Վրաստան-ՆԱՏՕ հանձնաժողովի պաշտպանության նախարարների մակարդակով Բրյուսելում անցկացված նիստի շրջանակներում, Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին հոկտեմբերի 7-ին հանդիպում ունեցավ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգի հետ:*

Հանդիպմանը քննարկվել են դաշինքին Թբիլիսիի անդամակցության հեռանկարները:

Ամփոփելով նիստի արդյունքները, դաշինքի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգը հայտարարեց, որ Վրաստանը եւ ՆԱՏՕ-ն վստահորեն միմյանց ընդառաջ են շարժվում: Նա հավելեց, որ ՆԱՏՕ-ն «աջակցում է Վրաստանի ատլանտյան ձգտումներին»:

Վրաստանին հարկավոր է ավելի մեծ առաջընթա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

## ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ 2700 ՏԱՐԵԿԱՆ Է

*Հայոց հոգեւոր մայրաքաղաքի՝ էջմիածնի 2700-ամյակին նվիրված տոնակատարությունների մեկնարկը տրվեց Վազգեն Սարգսյանի անվան հրապարակում սպարապետ Վազգեն Սարգսյանի հուշարձանի բացմամբ:*



էջմիածնի տոնի առիթով քաղաք այցելած Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եւս ծաղկեփունջ է դրել Վազգեն Սարգսյանի հուշարձանին: Նախագահի եւ էջմիածնի հյուրերի հաջորդ կանգառը քաղաքի ծայրամասում գտնվող սպորտային համալիրի տարածքն էր, որտեղ կատարվեց հիմնարկեքի արարողություն:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՎԼԱԴԻՄԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ



*Հոկտեմբերի 6-ին, Վրաստանի ներքին գործերի նախարար Գիորգի Մղեբրիշվիլու հրավերով, աշխատանքային այցով Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի ոստիկանության պետ, գեներալ-լեյտենանտ Վլադիմիր Գասպարյանի գլխավորած պատվիրակությունը:*

Դիմավորման արարողությունից հետո Հայկական պատվիրակությունն այցելեց ծառայական պարտականությունները կատարելիս զոհված ոստիկանների հուշահամալիր եւ ծաղկեպսակ դրեց զոհված վրացի ոստիկանների հուշակոթողին:

Ապա կայացավ երկու երկրների ներքին գործերի գերատեսչությունների ղեկավարների հանդիպումը:

Իրավապահ կառույցների ղեկավարները քննարկեցին փոխգործակցության ներկա վիճակը եւ հետագա զարգացմանը վերաբերող

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՆԱԽԱԳԻԾ

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՐԵՔ ՏՈԿՈՍԱՆՈՑ ԱՃԻ ՎՐԱ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾ ԲՅՈՒՋԵ

*Վրաստանի գործադիր իշխանությունը մշակեց եւ խորհրդարանի հաստատմանը ներկայացրեց 2016 թվականի պետական բյուջեի նախնական նախագիծը՝ ըստ կողմնորոշված տնտեսական երեք տոկոսանոց աճի:*

Հիշեցնենք, որ 2015 թվականի նախնական կանխագծումներով նախատեսված էր տնտեսական 5 տոկոսանոց աճ, թեպետ ընթացիկ տարվա հուլիսին այն նվազեցվեց մինչեւ երկու տոկոս՝ բյուջեում իրականացված համապատասխան փոփոխությունների արդյունքում: Ընթացիկ տարվա առաջին ութ ամիսների տնտեսական աճը կազմեց 2,8 տոկոս՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 6,1 տոկոսի դիմաց:

2016 թվականի բյուջեի նախնական նախագծում եկամուտները սահմանվել են 8,355 միլիարդ լարիի, իսկ ծախսերը՝ 8,373 միլիարդ լարիի չափով: Նշենք, որ ընթացիկ տարվա համար բյուջեի եկամուտները հաշվարկված էին 7,95, իսկ ծախսերը՝ 8 միլիարդ լարիի չափով:

Հաջորդ տարվա համար ծրագրվում է մոբիլիզացնել 7,78 միլիարդ լարիի մուտք, ինչը 380 միլիոնով կգերազանցի 2015 թվականի ցուցանիշը: Անփոփոխ, 225 միլիոն լարիի սահմաններում է մնում դրամաշնորհների տեսքով ստացվելիք գումարների ծավալը, թեպետ հաջորդ տարում այսպես

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐ

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյան եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեին հանձնարարեց հաջորդ տարի ուսուցիչների մասնագիտական տոնը նշել ավելի բարձր մակարդակով:

Անդրադառնալով կրթական ոլորտում իրականացվող բարեփոխումներին, վարչապետը նշեց, որ անցած երեք տարիներին ուսուցիչների աշխատավարձը աստիճանաբար բարձրացվել է: «2015-2016 թվականներին ուսուցիչների բազիսային աշխատավարձը ավելացվել է 65 տոկոսով, ուսուցչի միջին աշխատավարձը հավասարվում է երկրում սահմանված միջին աշխատավարձի մակարդակին: Հիանալի գիտակցում եմ, որ դա բավարար չէ, սակայն մեր նպատակն է, որ ուսուցիչները լիովին ապահովված լինեն, որ լիարժեք նվիրվեն մեր երեխաների դաստիարակության գործին»,- ասաց Իրակլի Ղարիբաշվիլին:

Վարչապետն ընդգծեց նաեւ, որ 2012 թվականին, երբ «Վրացական երազանքը» եկավ իշխանության գլուխ, կրթության նախարարության բյուջեն կազմում էր 617 միլիոն լարի, այս տարի այն հասցվել է 840 միլիոնի, իսկ հաջորդ տարվա համար ծրագրվում է այն հասցնել 975 միլիոն լարիի: «Իշխանափոխությունից հետո բացվել են նոր 100 դպրոցներ, 1069 դպրոցներում անցկացվել են հիմնարար վերանորոգումներ, 1150 դպրոցներում իրականացվել են աշակերտների տրանսպորտային անվճար փոխադրումները, շուրջ կես միլիոն աշակերտներ ապահովվել են անվճար դասագրքերով»,- նշեց վարչապետը եւ հավելեց. «Դեռեւս անելիքները շատ են եւ խոստանում եմ, որ ձեր վիճակը կլինի այնպիսին, ինչպիսին վաստակել եք»:



Ալմարի Սիրադեղյան

Միջոցառմանը Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն մատաղ սերնդի դաստիարակության գործում ներդրած բացառիկ ավանդի համար «Ամագդարի» (Վաստակաշատ) կրծքանշան հանձնեց երեք մանկավարժների, որոնց թվում էր Թբիլիսիի թիվ 104 դպրոցի ուսմնական բաժնի վարիչ Ալմարի Սիրադեղյանը: «Վրաստան» թերթը շնորհավորում է Ալմարի Սիրադեղյանին հեղինակավոր պարգեւի համար: Միջոցառմանը մասնակից 12 մանկավարժներ արժանացան պատվոգրերի ու նվերների:

Ընդունելությանը, որին ներկա էին Վրաստանի մասշտաբով շուրջ 100 ուսուցիչներ, մասնակցեցին նաեւ Վրաստանի կրթության ու գիտության նախարար Թամար Սանիկիձեն, ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի տնօրեն Գիորգի Մաչաբելին:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՎՈՒՄ ԵՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԵՎ ՀԱՆՈՒՆ ԵՐԿՐԻ ԱՊԱԳԱՅԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մասնական ընտրակարգով անցկացում:

«Ընտրությունները չեն անցկացվում որեւէ մեկի համար, լինի դա մեծամասնություն կամ ուժեղ ընդդիմություն: Դրանք անց են կացվում հասարակության համար եւ հանուն երկրի ապագայի: Դա մեր ցանկացած քաղաքացու իրավունքն է՝ ընտրել նրան, ում ցանկանում է տեսնել մեծամասնությունում եւ ես մեծամասնությանը խորհուրդ եմ տալիս ունկնդրել ընդդիմության խոսքը եւ հասնել փոխհամաձայնության»,- հայտարարեց նախագահը:

Շարունակելով ընտրությունների թեման, Գիորգի Մարգվելաշվիլին նշեց, որ ընտրությունների նախօրերին մտադիր չէ ստեղծել քաղաքական ուժ, միաժամանակ հավելեց, որ ինքը չի հեռանա քաղաքականությունից եւ պաշտոնաթող չի լինի:

Խոսելով ԵԽԽՎ-ի կողմից վերջերս Վրաստանի հասցեով ընդունած քննադատական բանաձեւի մասին, Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց, որ Վրաստանի խորհրդարանի պատգամավորները չկարողացան ԵԽԽՎ-ին ստույգորեն ներկայացնել Թբիլիսիի նախկին քաղաքապետի եւ նախորդ իշխանության մյուս բարձրաստիճանավորների ձերբակալության հարցը: «Զարմացնում է այն փաստը, որ վրաց պատգամավորները եվրոպացիներին չկարողացան տեղեկացնել այն մասին, որ այդ գործով արդեն կար Սահմանադրական դատարանի որոշումը: Եվ մեր դատական համակարգը կատարել էր այդ որոշումը»,- հայտարարեց նախագահը:

Իր հեռուստահարցազրույցում նախագահը կարեւորեց լրատվամիջոցների ազատությունը եւ, խոսելով «Ռուսթավի 2» հեռուստաընկերության շուրջ ծավալվող իրադարձությունների մասին, նշեց, որ մտադիր չէ խոսել այդ գործի դատական հետաքննության վերաբերյալ, քանզի «վեճը առնչվում է սեփականատերերին»:

ԴԱՏԱԿԱՆ

# ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՎՐԱՑԱԿԱՆ ԿՈՂՄԸ ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾ Է ԷԹՆԻԿԱԿԱՆ ԶՏՄԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ»



(Սկիզբը՝ 1-ին էջում)

համար: Պաշտոնական նամակից հետո արդեն դատարանը կհրապարակի՝ արդյոք բավարարում է հայցը, թե՝ մերժում: Մեկնաբանելով Հաագայի միջազգային դատարանի մտադրությունը, Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին հայտարարեց, որ Վրաստանի գլխավոր դատախազությունը օգոստոսյան պատերազմի ժամանակ էթնիկական զտման հարցով ակտիվորեն համագործակցում է Հաագայի դատարանի հետ: «Մենք ակտիվորեն կհամագործակցենք, քանի որ 2008 թվականի օգոստոսյան պատերազմի ժամանակ էթնիկական զտման հետաքննությունը ելնում է մեր շահերից»,- հայտարարեց նախարարը՝ հավելելով. «Միակը, ինչ չենք կարող անել, դա աշխատանքն է բռնազավթված տարածքներում, եւ հուսով ենք, որ միջազգային դատարանի միջնորդությամբ այդ արգելքը կհաղթահարվի»:

ՖԻՆԱՆՍՆԵՐ



# ՆՈԴԱՐ ԽԱԴՈՒՐԻ. «ԱՅՍ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԼԱՐԻՆ ԴԻՄԱՑԱՎ ԲՈԼՈՐ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ»

***Ինչպես հայտարարեց Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, լարիի փոխանակման կուրսը ոչ մի ազդեցություն չի գործում բյուջեի եկամուտների եւ ծախսերի վրա:***

Նրա խոսքերով, միակ հատվածը, երբ հաշվի է առնվում փոխանակման կուրսը, դա վարկերն են:

Անդրադառնալով ազգային տարադրամի՝ լարիի ներդրման 20-ամյա հոբելյանին, ֆինանսների նախարարը հայտարարեց, որ այս տարիներին լարին դիմացավ բոլոր փորձություններին:

«Լավ հիշում եմ առաջին օրը, այն դրամական բարեփոխման բեկումնային օրն էր, երբ լարին ընդամենը մեկ օրվա ընթացքում շրջանառությունից դուրս բերեց վրացական կուպոնը: Ծանր վիճակում էր գտնվում նաեւ ռուսական ռուբլին, այն Վրաստանում հիմնականում կատարում էր շրջանառու դրամի գործառույթը: Գտնում եմ, որ լարին անցած տարիներին դիմացավ բոլոր փորձություններին»,- հայտարարեց ֆինանսների նախարարը:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հիմնախնդիրները:

Կողմերը գոհունակություն հայտնեցին արդեն ավանդական դարձած գործընկերային հարաբերությունների ընդլայնման կապակցությամբ եւ ընդգծեցին, որ անհրաժեշտ է ամեն ինչ անել՝ վերջին տարիներին սկզբունքորեն նոր որակի բերված ամենօրյա համատեղ աշխատանքը ամրապնդելու համար:

Առարկայական ու շահագրգիռ քննարկման ընթացքում մտքեր փոխանակվեցին երկու գերատեսչություններում ընթացող բարեփոխումների ընթացքի եւ լավագույն փորձի փոխանակման անհրաժեշտության վերաբերյալ: Որոշվեց շարունակել ու խորացնել ակտիվ աշխատանքը կոնկրետ ոլորտներում փոխգործակցության ուղղությամբ, այդ թվում՝ մի շարք ծառայությունների ներկայացուցիչների փոխայցելությունների միջոցով:

Հանդիպման ավարտին՝ Վրաստանի ՆԳ նախարար Գիորգի Մղեբրիշվիլին եւ Հայաստանի ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանը համոզմունք հայտնեցին, որ երկու բարեկամ երկրների ոստիկանական կառույցների գործընկերությունն այսուհետ էլ կշարունակվի իրավապահ ուժերի եւ կարողությունների փոխշահավետ ինտեգրման ու հանցավորության դեմ համատեղ պայքարի խորացման ավանդական ճանապարհով:



### ՍԻՐԻԱ
## ՌՈՒՍԱԿԱՆ ՕԴՈՒԺԻ ՀԱՐՎԱԾՆԵՐ ԻՊ-Ի ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ

*Ռուսական օդուժը Սիրիայում ուղղորդված հարվածներ է հասցրել «Իսլամական պետություն» միջազգային ահաբեկչական կազմակերպության օբյեկտներին:*

*«Բոլոր հարվածները նպատակամղված են եղել ահաբեկիչների կառավարման կազմալուծմանը եւ նյութատեխնիկական ապահովման համակարգի խախտմանը»,- հայտնեց Ռուսաստանի պաշտպանության նախարարության պաշտոնական ներկայացուցիչ գեներալ-մայոր Իգոր Կոնաշենկովը:*

*Գեներալը հայտնեց, որ Սու-24 ռմբակոծիչներով Համայի նահանգի էր Ռաստանի մերձակայքում ոչնչացվել է ԻՊ-ի հրամանատարական կետը, Հոմսի նահանգի Թել-Բիսա բնակավայրի շրջանում հարվածներ են հասցվել ահաբեկիչների կողմից օգտագործվող երեք օբյեկտների: Ռմբակոծվել է զինյալների կապի հանգույցը, որը ահաբեկիչների ջոկատների միջեւ փոխգործակցություն էր ապահովում Հոմսի նահանգում:*

### ԹՈՒՐՔԻԱ
## ԲՈՂՈՔ ՕԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԽԱԽՏՄԱՆ ԱՌԹՈՎ

*Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը հոկտեմբերի 5-ին Ռուսաստանին ուղղված կոշտ հայտարարություն է տարածել՝ կապված հոկտեմբերի 3-ին Սիրիայում ռազմական գործողություններ իրականացնող ռուսական ինքնաթիռի՝ թուրքական օդային տարածքը խախտելու հետ: Թուրքիայի ԱԳՆ հայտարարության մեջ նշվում է, որ ռուսական ինքնաթիռը խախտել է սահմանը Հաթայի շրջանում եւ միայն թուրքական F-16 ռազմական ինքնաթիռների միջամտությամբ անցել է Սիրիա:*

*Ռուսաստանի պաշտպանության նախարարության պարզաբանմամբ, ռուսական կործանիչը, որը Սիրիայում մասնակցում է «Իսլամական պետության» դեմ գործողություններին, Թուրքիայի օդային տարածքը խախտել է սխալմամբ՝ ոչ բարվոք եղանակային պայմանների պատճառով:*

*Թուրքիայի նախագահ Էրդողանը սպառնացել է, որ Թուրքիան հնարավոր է հրաժարվի «Ակույու» ատոմային էլեկտրակայանի գործարկման հարցում Ռուսաստանի օգնությունից եւ ընդհանրապես դադարեցնի ռուսական գազի ներկրումը:*

### ԱՄՆ
## ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ ԿՑՈՒՑԱԲԵՐՎԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

*ԱՄՆ-ի Կոնգրեսի Սենատը հավանություն է տվել 612 մլրդ դոլարի չափով 2016 թվականի պաշտպանության բյուջեին: Օրինագծի տեքստն ուղարկվել է նախագահ Բարաք Օբամային, որը պետք է այն ստորագրի:*

*Բյուջեն, մասնավորապես, նախատեսում է Ուկրաինային տարատեսակ զենքի մատակարարումներ իրականացնելու հնարավորությունը: Փաստաթղթում նշվում է նաեւ Կիեւին հետախուզական տեղեկատվություն տրամադրելու հնարավորության մասին: Այդ նպատակներով հատկացված է 300 մլն դոլար:*

### ԲԵԼԱՌՈՒՍ
## ԱՆՑԿԱՑՎՈՒՄ ԵՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Հոկտեմբերի 6-10-ին Բելառուսի ավելի քան 6,1 հազար ընտրական տեղամասերում սկսվել է վաղաժամկետ քվեարկությունը երկրի նախագահի ընտրություններում: Բելառուսում գրանցված է շուրջ 7 մլն ընտրող:*

*Բելառուսի Նախագահական ընտրություններում քվեարկության հիմնական օրը հոկտեմբերի 11-ն է: Երկրի նախագահի պաշտոնին հավակնում են 4 թեկնածու, այդ թվում պետության գործող Նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն :*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

**ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ**

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱԼՅԱՆՍԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը` 1-ին էջում)

ցի հասնել բարենորոգումների ոլորտում, հայտարարեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը: «Վրաստանին հարկավոր է ավելի մեծ առաջընթացի հասնել բարենորոգումների ոլորտում, մասնավորապես, օրենքի գերակայության եւ դատական համակարգի անկախության ապահովման բնագավառում»,- ասաց նա:



Ստոլտենբերգի խոսքով, «ՆԱՏՕ-ն ԱԳ նախարարների` դեկտեմբերին կայանալիք հանդիպման ընթացքում, ինչպես նաեւ Վարշավայի գագաթաժողովում կգտնի բարենորոգումների ճանապարհին Վրաստանի հաջողությունները արձանագրելու եղանակը»: «Վրաստանը ճիշտ ճանապարհի վրա է, բայց թե' Վրաստանին, թե' դաշինքին դեռ անհրաժեշտ է մինչ այդ հանդիպումները կատարել իրենց տնային առաջադրանքը»,- ընդգծեց Ստոլտենբերգը եւ հավելեց, որ ՆԱՏՕ-ն հավատարիմ է մնում դաշինքի Բուխարեստի գագաթաժողովում ընդունված որոշմանը, եւ Վրաստանը կդառնա ՆԱՏՕ-ի անդամ:

Թինա Խիդաշելու խոսքերով, կողմերի քննարկման գլխավոր թեմաներն են դարձել ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հեռանկարները, Վարշավայի գագաթաժողովից Վրաստանի ակնկալիքները եւ դաշինքի Ուելսի գագաթաժողովում ՆԱՏՕ-ին անդամակցելուն Վրաստանի մոտենալու ուղղությամբ երկրին տրամադրված միջոցառումների փաթեթի իրագործման հարցերը:

Կողմերն արծարծել են նաեւ ՆԱՏՕ-ի` դեկտեմբերին Վարշավայում կայանալիք գագաթաժողովի թեման: Խիդաշելու կարծիքով, դեկտեմբերյան գագաթաժողովը «մեծ հավանականությամբ ՆԱՏՕ-ի ընդլայնման քայլ կդառնա»:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆՆ ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Է ՀԱՍԵԼ ԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ»



***Վրաստանի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին Բրյուսելում, աշխատանքային այցի շրջանակներում, հանդիպում ունեցավ Եվրամիության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիի հետ:***

Հանդիպմանը քննարկվեցին երկկողմ հարաբերություններում ընթացիկ առաջնահերթությունների եւ առաջիկա ծրագրերի հարցերը: Առանձնակի շեշտը դրվեց Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրի պայմանների կատարման վրա, եւ ընդգծվեց այցեգրային պայմանակարգի ազատականացման կարեւորությունը: Կողմերն անվտանգության տեսանկյունից քննարկեցին նաեւ Վրաստանում ստեղծված իրավաճակը եւ կարեւորեցին հակամարտությունների կարգավորման գործում Եվրամիության դերի ակտիվացումը:

Հանրագումարելով այցի արդյունքները, Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարեց, որ Վրաստանն աննախընթաց հաջողությունների է հասել այցեգրային պայմանակարգի ազատականացման հարցում:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

## ԴՄԻՏՐԻ ՔՈՒՄՍԻՇՎԻԼԻ. «ՎԵՐՋԻՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է 60 ՀԱԶԱՐ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂ»

***Վրաստանի էկոնոմիկայի նախարար Դմիտրի Քումսիշվիլու տեղեկատվությամբ, վերջին մեկ տարվա ընթացքում բացվել է 60 հազար նոր աշխատատեղ:***

«Զբաղվածության տեսակետից մեզ մոտ ցուցանիշները լավ են: Օրինակ, անցյալ տարվա հուլիսի համեմատությամբ, այս տարվա հուլիսի հաշվով բացվել է 60 հազար աշխատատեղ, եւ այդ հարցում բյուրոկրատական քաշքշուկ կամ աշխատանքով ինքնաապահովում չի եղել: Անկեղծ ասած, երբ ներկայացրին այս ցուցանիշը, կասկածեցի: Թեպետ վիճակագրական դեպարտամենտի նկատմամբ մեծ վստահություն եմ տածում, պահանջեցի ներկայացնել կոնկրետ ցուցանիշները: Արդյունքում ստացվեց, որ իրոք 60 հազար նոր աշխատատեղ է բացվել»,- հայտարարեց էկոնոմիկայի նախարարը` հավելելով, որ անկախ դրանից, կառավարությունը մտադիր է է'լ ավելի ակտիվացնել գործարարությանը:

«Փաստ է, որ էկոնոմիկան առաջընթաց է ապրում: Փաստ է նաեւ, որ մեզանում էկոնոմիկան աճում է: Փաստ է, որ, նախորդ տարվա համեմատությամբ, աշխատավարձն ավելացել է: Փաստ է նաեւ, որ հիմնել ենք 60 հազար նոր աշխատատեղ: Դիմելով մեր գործարարներին`



կոչ եմ անում ցուցաբերել է'լ ավելի մեծ ակտիվություն»,- հայտարարեց Դմիտրի Քումսիշվիլին:

ՆԱԽԱԳԻԾ

## ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿՀԻՄՆՎԻ ՄԻՋԿՐՈՆԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

***Սեպտեմբերի 26-27-ին Վրաստանի պատրիարքությանն առընթեր «Դավիթիանի» երիտասարդական կազմակերպությունը եւ «Քաղաքացիական հասարակության նախաձեռնություն» հասարակական կազմակերպությունը, «Երկրում հանդուրժողական իրավիճակի բարելավման եւ միջկրոնական համագործակցության» նախագծի շրջանակներում, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում անցկացրին արտագնա միջոցառում:***

Նախագծի նպատակն է` հիմնել միջկրոնական երիտասարդական խորհուրդ, որի կազմում կընդգրկվեն Վրաստանի ազգային եւ կրոնական փոքրամասնությունների երիտասարդ ակտիվ ներկայացուցիչներ:

Երկու օրվա ընթացքում երիտասարդներն առնչվեցին տարածաշրջանի ազգային, կրոնական եւ մշակութային բազմերանգության հետ, այցելեցին Ռաբաթի ամրոցը: Երիտասարդները եղան կաթոլիկ եկեղեցում, հրեական սինագոգում, հայկական Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, Ախալցիխեի եւ Ադիգենի մունիցիպալիտետներում գտնվող Սափարային եւ Զարզմայի եկեղեցական համալիրներում:

Միջոցառումն իրականացվեց Վրաստանի երիտասարդության եւ սպորտի գործերով նախարարության երեխաների ու երիտասարդների զարգացման հիմնադրամի աջակցությամբ:

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## ՓՈԽՎՈՒՄ Է ՀՐԱԶԵՆԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈՒ ՊԱՀՄԱՆ ԿԱՐԳԸ



***Ընթացիկ տարվա նոյեմբերի 1-ից, այն քաղաքացիները, ովքեր կցանկանան ձեռք բերել քաղաքացիական հրազեն կամ գազի ատրճանակ, զենքի հետ վարվելու քննություն են հանձնելու Վրաստանի ՆԳ նախարարության սպասարկման գործակալությունում:***

Քննություն են հանձնելու պաշտպանական կարճափող հրացան, գազի ատրճանակ, մարզական եւ որսորդական հրազեն գնել ցանկացողները: Զենքը կարող են գրանցել միայն քննությունը հաջողությամբ հանձնածները:

Քննություն չեն հանձնելու այն քաղաքացիները, ովքեր իրենց զենքը գրանցել են մինչեւ 2015 թվականի նոյեմբերի մեկը: Հրազեն ունեցողները նոր զենքի գնման դեպքում անցնելու են թեստավորում, թեպետ նույն կարգի հրազենի գնման դեպքում, նրանք ազատվում են քննությունը հանձնելուց:

Քննությունը հանձնելու համար ՆԳ նախարարության սպասարկման գործակալությանը հարկ է հանձնել հոգեկան առողջության մասին տեղեկանք, անձը հաստատող փաստաթուղթ ու հրազենի գնումը հաստատող կտրոնը:

Վրաստանի քաղաքացիներն ու օտարերկրացիները օրինականորեն հրազենը կարող են գնել միայն այն խանութներում, որոնք ունեն հրազեն վաճառելու հատուկ հավաստագիր, ընդ որում, գնելիս պետք է ներկայացնել դրա թույլտվությունը:



### «ԹԲԻԼԻՍՈԲԱ - 2015»

*Թբիլիսիի օրը` «Թբիլիսոբա-2015» կանցկացվի հոկտեմբերի 17-18-ին:*

*Այս տարվա «Թբիլիսոբայի» պատմության 36-րդ տոնի ծրագրավորմանը մասնակցեցին մայրաքաղաքի բնակիչները: Տոնակատարության միջոցառումները հստակեցվեցին քաղաքապետարանի կողմից անցկացված` «Իմ «Թբիլիսոբան» մրցույթի ընթացքում:*

*Տոնական միջոցառումների անցկացման համար Թբիլիսիի սակրեբուլոն հատկացրել է 977 հազար լարի:*

*Տոնը կմեկնարկի հոկտեմբերի 16-ի երեկոյան, պատվավոր թբիլիսցիների պարգեւատրման արարողությամբ, իսկ հոկտեմբերի 17-18-ին Ռիղեի հրապարակում կանցկացվեն տոնական միջոցառումներ` համերգներ, մարզական խաղեր, ցուցահանդես-վաճառքներ, խոհարարների փառատոն:*

*«Թբիլիսոբա - 2015»-ին հրավիրված աշխարհի տարբեր քաղաքների պատվիրակությունների հետ միասին, տոնին կմասնակցի նաեւ Երեւանի քաղաքապետարանի պատվիրակությունը` քաղաքապետ Տարոն Մարգարյանի գլխավորությամբ:*

### ԲԱՑՎԵՑ ՎՐԱՑԱԿԱՆ ԳԻՆՈՒ ԿԵՆՏՐՈՆ

*Հոկտեմբերի 4-ին, վրացական գինու օրվա կապակցությամբ, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին եւ գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան մասնակցեցին գինու ազգային գործակալության նորացված գրասենյակում վրացական գինու կենտրոնի բացման հանդիսավոր արարողությանը:*

*Վրացական գինու օրվան նվիրված միջոցառումների շրջանակներում, Վրաստանի վարչապետը, գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիայի եւ Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիայի ուղեկցությամբ, Թբիլիսիի Վարդերի հրապարակում այցելեց բացված ցուցահանդես-վաճառքը:*

*Ի նշանավորումն Վրացական գինու օրվա, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, կառավարության մյուս անդամները, իրենց զավակներով Կախեթիում մասնակցեցին խաղողի բերքահավաքին` Ռթվելիին:*

### ԿՄՇԱԿՎԻ ՎԱՌԵԼԱՓԱՅՏՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

*Վրաստանի բնապահպանության նախարարությունում «Ազգային անտառային ծրագիրը», CENN-ի հետ միասին, անցկացրեց «Գյուղական բնակչությանը վառելափայտով ապահովելու պետական ծրագրի մշակման» թեմայով աշխատանքային հանդիպում:*

*Հանդիպմանը քննարկվեց բնակչությանը վառելափայտով ապահովելու ուսումնասիրության մեթոդիկան` կապված իրավական հարցերի հետ եւ «Ազգային անտառային ծրագրի» շրջանակներում տեխնիկական երկու ենթախմբի ստեղծման նախաձեռնությունը: Հանդիպման մասնակիցները ծանոթացան նաեւ ջեռուցման այլընտրանքային աղբյուրների հարցով իրականացված ուսումնասիրությունների արդյունքներին:*

### ՆԵՐՈՒՄ` 152 ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ

*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ներում է շնորհել 152 բանտարկյալի: Նրանցից 103-ը հոկտեմբերի 9-ին բանտից ազատ արձակվեցին, իսկ 49 բանտարկյալների պատժաժամկետը նվազեցվեց:*

*Ինչպես հայտարարեց ներման հանձնաժողովի նախագահ Զվիադ Քորիձեն, ներում է շնորհվել 14 կանանց եւ 8 անչափահասի: Ընդհանուր առմամբ, հանձնաժողով է մուտք գործել 910 դիմում, որից 152-ը բավարարվել է:*

*Ներման արժանացածները հիմնականում մեղադրվում էին թմրանյութերի հետ կապված գործերով:*

ՆԱԽԱԳԻԾ

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՐԵՔ ՏՈԿՈՍԱՆՈՑ ԱՃԻ ՎՐԱ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾ ԲՅՈՒՋԵ



(Սկիզբը՝ 1-ին էջում)

կոչված «այլ ծախսերը» ավելացվում են 25 միլիոնով եւ կկազմեն 320 միլիոն լարի:

Բյուջեի նախնական նախագծի համաձայն, միջոցները նախարարությունների ու գերատեսչությունների միջեւ բաշխվում են հետեւյալ կերպ.

Աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության բյուջեն նախորդ տարվա 2,785-ի դիմաց կկազմի 3,07 միլիարդ լարի: Նախագծին կցված բացատրական թերթիկում նշված է, որ այս տարվա համեմատությամբ, մեկ միլիոն լարիով ավելացվում է վերոնշյալ նախարարության բյուջեից կենսաթոշակային ապահովման գումարը եւ 2016 թվականին կենսաթոշակների համար նախատեսված ընդհանուր գումարը կկազմի 1,48 միլիարդ լարի: Հիշեցնենք, որ ընթացիկ տարվա սեպտեմբերից տարիքային թոշակառուների կենսաթոշակն ավելացվեց 10 լարիով եւ ներկայումս կազմում է 160 լարի:

Հաջորդ տարի շուրջ 4 միլիոնով վելացվում է ներքին գործերի նախարարության բյուջեն: Այն նախորդ տարվա 591,65-ի դիմաց կկազմի 595 միլիոն լարի: Շուրջ 4,5 միլիոնով աճում է տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության բյուջեն՝ այն կկազմի 950 միլիոն լարի: 2015 թվականին կրթության եւ գիտության նախարարության բյուջեն սահմանվել էր 840,8 միլոն լարիի չափով, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաջորդ տարվա ապրիլին ուսուցիչների բազիսային աշխատավարձը 355-ից հասցվելու է 405 լարիի, հետեւաբար, գերատեսչության բյուջեն, համապատասխանաբար, ավելացվել է եւ հաջորդ տարվա համար ծրագրվել է 975,19 միլիոն լարիի չափով: Մոտ 14 միլիոնով ավելացվում է գյուղատնտեսության նախարարության բյուջեն, այն կկազմի 281,35 միլիոն լարի: Հաջորդ տարվա բյուջեի նախագծի հիմնական կազմողները՝ ֆինանսների նախարարության աշխատակիցները իրենց գերատեսչությանը հատկացվող գումարը նվազեցրել են մեկ միլիոնով ու առանձնացրել 90 միլիոն լարի: Շուրջ կես միլիոնով նվազեցվել է նաեւ էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության բյուջեն: Այն 2016 թվականին կկազմի 85 միլիոն լարի: Գրեթե 20 միլիոնով ավելացվում է էներգետիկայի նախարարության բուջեն, որը նախնական նախագծով սահմանվել է 135 միլիոն լարիի չափով: Աննշան ավելացվում են նաեւ արդարադատության եւ պատիժների կատարման ու պրոբացիայի նախարարությունների բյուջեները՝ նախորդ տարվա 66,1-ի ու 150,5-ի դիմաց այս տարի այդ գերատեսչություններին կտամադրվի համապատասխանաբար՝ 68,5 եւ 153 միլիոն լարի: 10,5 միլոնով ծրագրվում է ավելացնել արտաքին գործերի նախարարության բյուջեն, այն սահմանվել է 100 միլիոն լարիի չափով: Գրեթե անփոփոխ են մնացել մշակույթի եւ հուշարձանների պահպանության ու բնապահպանության եւ բնական ռեսուրսների պաշտպանության նախարարությունների բյուջեները՝ նախորդ տարվա 94,9-ի ու 36,7-ի դիմաց 2016-ին կկազմի, համապատասխանաբար, 95 եւ 40,7 միլիոն լարի: Չեն փոխվել նաեւ փախստականների եւ բռնագաղթվածների նախարարության, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարարության, եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին ինտեգրման պետնախարարության ու սփյուռքի հարցերով պետնախարարության բյուջեները՝ նախորդ տարվա նման դրանք սահմանվել են, համապատասխանաբար, 70, 1,35, 3,1 ու 1,2 միլիոն լարիի չափով:

Բավականին հետաքրքիր է պաշտպանության նախարարությանը հատկացվող գումարների տատանման դինամիկան, այսպես, եթե 2012 թվականին գերատեսչության համար առանձնացվել էր 730,6 միլիոն լարի, ապա 2013-ին այդ գումարը նվազեցվեց մինչեւ 610,4 միլիոն լարի, ապա կրկին ավելացվեց եւ 2014 ու 2015 թվականներին այն կազմեց, համապատասխանաբար, 667,4 ու 667,3 միլիոն լարի: 2016 թվականի համար պաշտպանական գերատեսչությունը իր տնօրինության տակ կունենա 670 միլիոն լարի:

Հաջորդ տարվա համար 6 միլիոն լարիով ավելացվում է խորհրդարանի բուջեն, այն կկազմի 52 միլիոն լարի:

Կառավարության աշխատակազմին հատկացվող գումարը 20,9 միլիոնից նվազեցվում է մինչեւ 17 միլիոն լարիով: 20 միլիոն լարիով նվազեցվում է նաեւ կառավարության պահուստային հիմնադրամը՝ այն սահմանվում է 50 միլիոն լարիի չափով: Անփոփոխ է մնում նախագահական աշխատակազմի ու նրա պահուստային հիմնադրամի բյուջեն՝ այն, համապատասխանաբար, կկազմի 9,8 եւ 5 միլիոն լարի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2016 թվականի հոկտեմբերի համար նախատեսված է խորհրդարանական ընտրությունների անցկացում, զգալիորեն ավելացվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի բյուջեն՝ ընթացիկ տարվա 22,5-ի դիմաց այն կկազմի 58,5 միլիոն լարի:

2016 թվականի բյուջեի նախագծում նշված են նաեւ այն գումարները, որոնք հատկացվելու են տարբեր ատյանների դատարաններին, պետական աուդիտի ծառայությանը, Ժողովրդական պաշտպանի աշխատակազմին, հանրային հեռուստատեսությանը, Վրաստանի պատրիարքությանը եւ այլն:

Հատկանշական է նաեւ, որ 2016 թվականի բյուջեի նախագիծը նախատեսում է բարձրալեռ շրջանների զարգացման հիմադրամի հիմնում, ինչի համար առանձնացվում է 20 միլիոն լարի:

Երկրամասային վարչությունների համար հատկացվող միջոցները մնում են անփոփոխ, իսկ ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման համար նախատեսված տրանսֆերներին, ապա 2015 թվականի 854,8-ի դիմաց այն կկազմի 620 միլիոն լարի: Բացատրական թերթիկի համաձայն, պակասորդը տեղական ինքնակառավարման մարմինները լրացնելու են առանձին եկամտահարկերի հաշվին, որոնք 2016 թվականին, կենտրոնական բյուջե առաքվելու փոխարեն, կմնան տեղական բյուջեում եւ կազմելու են շուրջ 300 միլիոն լարի:

Ավելացնենք նաեւ, որ 2016 թվականի բյուջեի նախնական նախագիծը կազմելիս, հեղինակները որպես հաշվարկային ելակետ ընդունել են ամերիկյան մեկ դոլարի դիմաց վրացական 2,4 լարիի հարաբերակցությունը:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*

## ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԸ ՉԵՆ ԱՎԵԼԱՑՎԻ

*Ինչպես հայտարարեց Վրաստանի ֆինանսների փոխնախարար Գիորգի Կակաուրիձեն, 2016 թվականի բյուջեում կենսաթոշակների եւ սոցիալական նպաստների ավելացում չի նախատեսված, քանի որ երկրի էկոնոմիկան դրա հնարավորությունները չունի:*

*«Հիշեք, թե երբ ծրագրվեց 2015 թվականի բյուջեն՝ դա անցյալ տարվա հոկտեմբեր-նոյեմբերն էր: Այդ ժամանակ տնտեսական ցուցանիշները բավականին բարձր էին եւ, ընդհանրապես, տարածաշրջանում, իրավիճակը, ի տարբերություն ներկա դրության, այնքան էլ բարդ չէր: Մենք չենք գտնում, որ սոցիալական ծախսերը պետք է ծանրաբեռնվեն նոր պարտավորություններով, քանի որ Վրաստանի էկոնոմիկան նման հնարավորություններ չունի: Այդ պատճառով կենսաթոշակների եւ սոցիալական նպաստների ավելացումը պետք է իրականացվի աստիճանաբար, Վրաստանի էկոնոմիկայի ավելացման հաշվառմամբ»,- հայտարարեց փոխնախարարը:*

ՀՐԱՏԱՊ

# ԳԱԶԻ ԲԱԼՈՆՆԵՐՈՎ ԱՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՍՏՈՒԳՈՒՄԸ ՊԱՐՏԱԴԻՐ Է ԴԱՌՆՈՒՄ

### ԲՆԱԿԱՆ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԸ, ՄԻՆՉԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ ՄԵԿԸ, ՊԵՏՔ Է ԱՆՑՆԵՆ ՏԵԽՍՏՈՒԳՈՒՄ

*Վրաստանի կառավարության թիվ 437 կարգադրության մեջ, որն առնչվում էր ավտոտրանսպորտային միջոցներում գազի բալոնների տեղակայման, տեխնիկական պահանջներին դրանց համապատասխանության գնահատմանն ու անվտանգ շահագործմանը, կատարվեցին փոփոխություններ: Այսուհետեւ գազով աշխատող ավտոտրանսպորտային միջոցներում մոնտաժված գազի բալոնների եւ գազի բալոնների սարքավորման համակարգի նույնականացումը եւ անհրաժեշտ տեխնիկական ստուգումը դառնում են պարտադիր:*



Վերոնշյալ հրատապ թեմայի շուրջ ծագած հարցերի կապակցությամբ դիմեցինք bpn.ge «էկո տրանսպորտ ցենտրի» գործադիր տնօրեն Վասո Ուրուշաձեին:

Նրա խոսքերով, ընդունված փոփոխությունները անմիջականորեն առնչվում են կարգադրության 14-րդ կետին, որը վերաբերում է ավտոմեքենաներում գազի բալոնների տեղակայմանը եւ գազի բալոնների համակարգերի նույնականացմանն ու ստուգման հաճախականությանը:

«Փոփոխությունների համաձայն, գազի բալունների եւ դրանց սարքավորման համակարգերի տեխնիկական պահանջներին համապատասխանության պարբերաբար պարտադիր գնահատման անցկացման, տեխնիկական սույն պայմանակարգի համաձայն, տեսչական մարմնի իրավասու ներկայացուցիչը պետք է ստուգի ավտոմեքենայում գազի բալոնները եւ գազի բալոնների սարքավորումների վերահսկողությունը հաստատող փաստաթղթերը, իսկ դրանց բացակայության դեպքում անցկացնի գազի բալոնների եւ գազի բալոնների սարքերի համակարգի սուգումը»,- հայտարարեց Վասո Ուրուշաձեն:

Նրա խոսքերով, ածխաջրածնային ֆոլգայից կամ մետաղապլաստիկատից պատրաստված գազի բալոնների դեպքում, ստուգումը անց է կացվելու երեք տարին մեկ անգամ: Լեհիրացված ֆոլգայից պատրաստված գազի բալոնների ստուգման հաճախականությունը հինգ տարին մեկ անգամ է ստուգվելու: Այն դեպքում, եթե բալոն արտադրողի փաստաթղթում չի նշված գազի բալոնի նյութի բաղադրությունը, ապա այն երեք տարին մեկ անգամ պարտադիր ստուգվելու է:

Վասո Ուրուշաձեի տեղեկատվությամբ, նորամուծություն է նաեւ այն, որ պարտադիր է դառնում նաեւ գազի բալոնների սարքավորման համակարգի ստուգումը, որը նույնպես պետք է ստուգում անցնի երեք տարին մեկ անգամ:

Այլընտրանքային վառելանյութի, կոնկրետ գազով աշխատող մեքենաները տեխնիկական ստուգում պետք է անցնեն՝ մինչեւ 2016 թվականի ապրիլի մեկը:

Վասո Ուրուշաձեի խոսքերով՝ մինչեւ հաջորդ տարվա ապրիլի մեկը այնքան էլ մեծ ժամանակահատված չէ, եւ նման սարքավորում ունեցող մեքենաների սեփականատերերը պետք է շտապեն: Նա նշեց, որ, ներկա դրությամբ, ստույգորեն հայտնի չէ, թե Վրաստանում գազի բալոններով հագեցված քանի մեքենա է երթեւեկում: Բացակայում են նաեւ հատուկ լաբորատորիաներով հագեցված հավաստագրման կենտրոնների կողմից հավաստագրված տեսչական կենտրոնները, որտեղ էլ իրականացվելու է բնական գազով աշխատող մեքենաների տեխնիկական ստուգումը:

«Անընդունելի է այն փաստը, որ փոփոխությունների ընդունմանը չեն նախորդել խորհրդատվություններ անկախ փորձագետների ու ոչ կառավարական հատվածի հետ, հանրային քննարկումներն ու բանավեճերը: Այսպիսով, վերոնշյալ հիմնախնդրի նկատմամբ կառավարության դիրքորոշումը որոշակի հարցեր է առաջացնում: Մասնավորապես, ինչո՞ւ է կառավարությունը շարունակում իրեն չարդարացրած այն պրակտիկան, որն իրականացվեց մեքենաների պարտադիր տեխստուգման բարեփոխման ժամանակ եւ, որը լրիվությամբ տապալվեց: Հետաքրքիր է, ինչո՞ւ է կառավարությունը խուսափում այս հիմնախնդրի հրապարակայնությունից եւ լրատվամիջոցներով այդ մասին բնակչությանը մանրամասն տեղեկատություն հանձնելուց»,- հայտարարեց Վասո Ուրուշաձեն:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*